

ՄԱՍԼՈՅ
ԱՐՁԱԿՈՒՐԳ

Ֆիլիպինի սոսիալական և համաձայն Մամլոյ սենտրոնի որոշումով, «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ հինգշաբթի, 11, ուրբաթ, 12 եւ շաբաթ, 13 ապրիլ 2024-ին: Մեր յաջորդ թիւը՝ երկուշաբթի, 15 ապրիլ 2024-ին:

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

آزتك جريدة يومية سياسية وأدبية - الدرة السؤلة - إجازة ترويشتيان

50.000 Լ.Ո. 98-ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 28 (26535) ԶՈՐԵՔԱԲԹԻ, 10 ԱՊՐԻԼ 2024 8 ԷՁ

«ՖՐԱՆՍԱՆ ՈՒՆԻ ՄՊԱՈՒՋԻՆՈՒԹԻՒՆ,
ՈՐ ԲՈՒՆՈՐ ԿՈՒՁԵՆ ԶԵՐ ԲԵՐԵԼ,
ԵՒ ՖՐԱՆՍԱՆ ԶԱՅՆ ԿՈՒ ՏԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

Հայաստանի Հանրապետության մեջ Ֆրանսայի դեսպան Օլիվիե Տեդրոսյանի «Էքս»-ի վրայ գետնադառնալով «Փոլիթեքս» օրաթերթի՝ Ֆրանսայի արտադրած սպառնալուծության վերաբերյալ ծառայուն յօդուածը՝ ընդգծելով, որ Ֆրանսան ունի սպառնալուծություն, որ բոլորը կ'ուզեն ձեռք բերել, եւ Ֆրանսան զայն Հայաստանին կը տրամադրէ: Յօդուածին մեջ կը նշուի, որ «Թայե» օրաթի հսկողության ռատարները կը հանդիսանան նախապես Ռուսիոյ տիրապետության տակ գտնուած երկիրներուն հետ պաշտպանական կապերու խորացման ուղղուած Ֆրանսայի ջանքերու հիմնական բաղկացուցիչը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՒԺԵՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
«ՓԱՍՔԱԼ ՍԼԷՅՄԱՆԻ
ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՒՐ Է,
ՄԻՆՉԵՒ ՀԱՎԱՈՒԱԿԸ ՓԱՍՏՈՒՄ»



Լիբանանեան ուժեր կուսակցության ժխտելի պատասխանատու Փասքալ Սլեյմանի սպանությունը երկրին մեջ յառաջացուց ընդվզումի ալիք մը՝ տիրող ապահովական դիրքաբեկ կացության, ինչպես նաեւ պետության չզոյութեան իրականության մթնոլորտին մեջ:

Քաղաքական շրջանակները դատապարտեցին Փասքալ Սլեյմանի սպանությունը՝ միաժամանակ ինքնազսպումի կոչ ուղղելով:

Լիբանանեան բանակը երկէ երեկոյեան յայտնեց, որ սուրիական իշխանութիւններէ ստանձնած է Փասքալ Սլեյմանի դիակը եւ զայն պիտի փոխադրէ զինուորական կեդրոնական հիւանդանոց՝ դիագնոստիկ կատարելու եւ անոր սպանութեան հետաքընտրութիւնը ամբողջացնելու համար:

Բանակը հաստատեց, որ աւելի ուշ անոր դիակը պիտի յանձնուի ընտանիքին:

Բանակի գաղտնի սպասարկութիւնը Սուրիայէն ստանձնեց նաեւ Փասքալ Սլեյմանի ինքնաշարժը:

Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը նախանցեալ գիշեր հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ խոր կսկիծով եւ անվերջ ցատումով կը գուժեն իրենց ընկերոջ՝ Փասքալ Սլեյմանի նահատակութիւնը, եւ ապահովական ու դատական կառոյցներէն կը խնդրեն լուրջ եւ ընդարձակ հետաքննութիւն բանալ ձեռքարկելու հետ, որպէսզի կարելի ըլլայ ըստմտելի այդ ոճիրին կապուած ճշմարտութիւնը բացայայտել:

Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը հաստատեց, որ ոճիրը գործելու իմաստով ցարդ նշուած պատճառները ճշմարտութեան չեն համապատասխաներ, «հետեւաբար Փասքալ Սլեյմանի սպանութիւնը քաղաքական ոճիր է, մինչեւ հակառակը փաստուի», կը նշէ հաղորդագրութիւնը:

Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը շնորհակալութիւն յայտնեց ժխտելի բնակչութեան, քաղաքացիութեան անդամներուն, կուսակցութիւններուն եւ անհատներուն, որոնք առաջին իսկ վայրկեանէն դատապարտեցին ցաւալի պատահարը:

Շար.ը՝ էջ 7

ՖՐԱՆՍԱ, ՅՈՐԴԱՆԱՆ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ
ԿԱԶԱՅԻ ՄԷՁ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ԶԻՆԱԳԱԳԱՐԻ ԿՈՉ ԿՈՒՂՂԵՆ

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն, Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը եւ Եգիպտոսի նախագահ Ապտէլ Ֆաթթահ Սիսի յայտնեցին, որ Կազայի մեջ մարդկային կորուստները «անտանելի են», եւ ընդգծեցին Կազայի մեջ «անմիջական» զինադադար հաստատելու «հրատապ կարիքը» եւ «բոլոր գերիները» ազատ արձակելու հրամայականը՝ զգուշացնելով Իսրայէլը Ռաֆաիի դէմ իր հաւանական յարձակումին «վտանգաւոր հետեւանքներէն»:

Երեք ղեկավարները Ֆրանսական «Լը Մոնտ», ամերիկեան «Ռաշինկլթըն Փոսթ», յորդանանեան «Ռայ» եւ Եգիպտական «Ահրամ» օրաթերթերուն մեջ լոյս տեսած իրենց միացեալ յօդուածին մեջ յայտնեցին. «Կազայի մեջ պատերազմը եւ այդտեղ անոր պատճառած մարդասիրական աղետալի տառապանքը պետք է հիմա աւարտի»:

Անոնք նաեւ նշեցին, որ «հրատապ կարիք» կայ Կազայի մարդասիրական օժանդակութիւն տրամադրելու եւ ցրուելու՝ աւելցնելով. «Կազայի մեջ պողեցտիկները այլեւս պարզապէս սովի վտանգը չեն դիմագրաւեր, որովհետեւ սովը արդէն իրողապէս սկսաւ»: Դեկլարանտները նաեւ մատնանշեցին ԵՈՒՆԵՍԿՈՒՄ-ի «վճռական դերակատարութիւնը»:

Ֆրանսայի, Յորդանանի եւ Եգիպտոսի ղեկավարները նշեցին, որ Ռաֆաիի դէմ Իսրայէլի ծրագրած յարձակումը «միայն յաւելեալ մահուան ու տառապանքի պիտի յանգեցնէ, ինչպէս նաեւ պիտի աւելցնէ Կազայի բնակիչներուն բռնի տեղահանման վտանգներն ու հետեւանքները եւ շրջանային մագլցումը կը սպառնայ»:

«Բռնութիւնը, ահաբեկչութիւնն ու պատերազմը չեն կրնար Միջին Արեւելքին խաղաղութիւն բերել, սակայն «երկու պետութիւններ» լուծումը այդ մէկը պիտի իրագործէ, որովհետեւ խաղաղութեան եւ բոլորին անվտանգութեան երաշխաւորման միակ հաւաստի ուղին է», գրեցին անոնք՝ յորդանուցի «վերջ տալ բոլոր միակողմանի քայլերուն, ներառեալ բնակեցման աշխատանքին ու հողերու գրաւման», ինչպէս նաեւ Իսրայէլին կոչ ուղղեցին՝ բնակեցուածներու կողմէ գործուող բռնարարները արգիլելու:

Շար.ը՝ էջ 2

ԹՈՒՐԿԻԱ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՄ ՔԱՅԼԵՐ ԿՈՐԳԵԳԻՔ
ԿԱԶԱ ՕԳԻ ՃԱՄԲՈՎ ՕԺԱՆԿԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՍՏԵԼՈՒ ԱՆԳԱՐԱՅԻ
ԽՆԴՐԱՆՔԸ ՄԵՐԺԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հաքան Ֆիտան յայտարարեց, որ իր երկիրը որոշած է Իսրայէլի դէմ նոր քայլեր որդեգրել՝ նշելով, որ թրքական օդուժը ուզած է մասնակցիլ Կազայի վրայ օժանդակութիւններ նետելու գործողութեան, սակայն անոր դիմումը, «որ յորդանանեան իշխանութիւններուն կողմէ ողջունուեցաւ, Իսրայէլի կողմէ մերժուեցաւ»: Այս մասին հաղորդեց «ժազիրա» արբանեակային պատկերասփիւռի կայանը:



Շար.ը՝ էջ 8

«ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԼՈՒԾԵԼ՝ ԲԱՅԻ ՆԵՐՔԻՆ
ՀԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ»

ՇԵՇՏԵՑ Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունիի «Սփոթիք» ռատիոկայանին հետ կատարած իր հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ նախագահական ընտրութեան հարցը մօտիկ ապագային պիտի չլուծուի, հակառակ միջազգային ջանքերուն:



Ան հաստատեց, որ Կազայի եւ հարակից Լիբանանի դէմ պատերազմը ինչգիտեք պարտադրած է անհրաժեշտ նկատուող մնացեալ բոլոր հարցերուն վրայ:

Յ. Բագրատունի շեշտեց, որ Լիբանան Իսրայէլի դէմ պատերազմի մեջ է, եւ պայմանները անյարմար են նախագահական ընտրութիւն կատարելու:

«Նախագահական ընտրութեան թղթածրարը հետապնդող Լիբանանի յատուկ միջազգային ինքնակազմ» Եգիպտոս, Մեուտական Արաբիա, Զաթար, Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ, չի յաջողիր այդ հարցը անջատել հարակից Լիբանանի մեջ արձանագրուող մագլցումներէն: Տակաւին կայ այլ իրականութիւն մը, որ Ռաշինկլթընի եւ Փարիզի մօտեցումներուն պարագային տարակարծութիւն ունի: Նախագահական ընտրութեան հարցը կարելի չէ լուծել՝ բացի ներքին համախոհութեամբ եւ արտաքին որոշումով, հաստատեց ան՝ աւելցնելով, որ Լիբանանի քաղաքական անձնատիրութիւնները տասնեակ տարիներու ընթացքին ձախողեցան հանրապետութեան նախագահ ընտրելու, առանց նախագահին շուրջ ներքին համախոհութիւն գոյացնելու եւ անոր անձին մասին արտաքին համաձայնութիւն ապահովելու:

Շար.ը՝ էջ 8

ՌՈՒՍԱՍՏԱՆ. «ՉԵՄ
ԲԱՅԱՌԵՐ, ՈՐ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ
ԼԱՅՆԱԾԱԿԱԼ
ՅԱՐԶԱԿՄԱՆ ԴԻՄԷ»

ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Ռուստամեանը չի բացատրեր, որ Ազգայնաւոր դիմէ Հայաստանի դէմ լայնածաւալ յարձակման. երկը՝ 9 ապրիլին, Ազգային ժողովին մեջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց ան:



«Եթէ մագլցումի վտանգ չկայ՝ ինչո՞ւ իշխանութիւնը մեր ժողովուրդը կը վախցնեն պատերազմով: Վերջերս Նիկոլ Փաշինեանը այցելած էր սահմանամերձ գօտի, ուր կը պատրաստուին տարածքներ յանձնել, ահաբեկած էր պատերազմով: Եթէ որեւէ վտանգ չկայ՝ պետք է ժողովուրդը վախցնել, բայց, իրականութեան մեջ, ատիկա այդպէս չէ: Սա շատ յստակ ծրագրուած գործընթաց է. այնտեղէն կը վախցնեն, այստեղէն կը վախցնեն եւ կը ստեղծեն տպաւորութիւն, որ ուրիշ ճանապարհ չունիք, պետք է զիջիք, որ կարենանք գոյատեւել», ըսաւ ան:

Ըստ անոր, բանաւոր խօսակցութիւնները կը գուրդողին սահմանային լարուածութիւններով, որպէսզի Ազգայնաւոր ու թուրքիան ստանան իրենց համար ընդունելի արդիւնքներ եւ հասնին իրենց նպատակին:

Ռուստամեան ըսաւ, թէ ինք գիտէ, թէ որքան պետք է զիջի Ազգայնաւորին, որ բաւարարուին անոր պահանջները. «Մինչեւ հայկական ինքնութեան վերացումը, մինչեւ հայկական գործնի վերացումը եւ Հայաստանի վերածումը «Արեւմտեան Ազգայնաւոր»-ի: Բնականաբար, այս ընթացքը կ'իրականացուի այս ահաբեկչական մթնոլորտը ստեղծելով, մենք ալ կ'ըսենք՝ թոյլ եւք, անկարող եւք: Ես չեմ բացատրեր, որ Ազգայնաւոր այս անգամ նաեւ լայնածաւալ յարձակման դիմէ, որ մէկ անգամէն խնդիր լուծէ: Տեղական բախումներու ընթացքին Ազգայնաւորը միշտ հասած է որոշակի տեղական արդիւնքներու, բայց այս անգամ, կը կարծեմ, որ իրենց խնդիրը աւելի ընդհանուր է», ըսաւ Ռուստամեան:

Ան ըսաւ, որ երբ Հայաստանէն կ'ըսուի, որ այդ տարածքները ազգայնացնուցնուցնուցն են, ատով գաւորը կը հրակիրենք այդ տարածքները մտնելու, նաեւ՝ գործով:

Արմէն Ռուստամեան յայտարարեց, որ Թուրքիոյ եւ Ազգայնաւորի նպատակն է Հայաստանը բերել այն վիճակին, որ որեւէ կարողութիւն անգամ չունենայ՝ պաշտպանելու իր նուազագոյն շահերը:

«Անոնք յստակ ծրագիր դրած են՝ չեզոքացնել հայկական գործոցը շրջանին», աւելցուց պատգամաւորը:

«Չանգեզուրի միջանցք»-ը եղած է եւ կը մնայ օրակարգի վրայ, ինչքան ալ այս իշխանութիւնները կը փորձեն ըսել, որ ատիկա հանուած է օրակարգէն», նշեց Արմէն Ռուստամեան՝ անորադառնալով Ազգայնաւորի կողմէ «Չանգեզուրի միջանցք»-ին հետ կապուած պահանջներուն:

ԵՐԵՄՓՈՒՄԱՆ Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՓԱՍՔԱԼ
ՍԼԷՅՄԱՆԻ ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունիի ընկերային ցանցերուն վրայ կատարեց գրառում մը՝ դատապարտելով Փասքալ Սլեյմանի սպանութիւնը:



Յ. Բագրատունի կատարեց հետեւեալ գրառումը. «Մեր վկայած ապահովական դիրքաբեկ կացութեան մեջ, խստիկ կը դատապարտենք Փասքալ Սլեյմանի սպանութիւնը եւ կը ցաւակցիմք անոր փոքր ընտանիքին ու Լիբանանեան ուժեր կուսակցության ընտանիքին: Դատական իշխանութիւններէն կը պահանջենք իստագոյն պատճառական տնօրինումները որդեգրել ոճրագործներուն դէմ՝ կանխարգիլելու համար նման ոճիրներու կրկնութիւնը, եւ ինքնազսպումի ու կացութիւնը հանդարտեցնելու կոչ կ'ուղղեն: Աստուած Փասքալ Սլեյմանի հոգին լուսաւորէ եւ Լիբանանը պաշտպանէ»:

Շար.ը՝ էջ 7

ՄԻՒԼԼԵՐ. «ՄԻԱՅՏԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ
ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ
ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ ԱՋԱԿՏԵԼՈՒ
ԳՈՐԾԻՆ ՄԷՁ
ՈՐԵՒԷ ԳԵՐ ԽԱՂԱԼՈՒ»

Ռաշինկլթըն յստակ ըսած է՝ Հայաստանի եւ Ազգայնաւորի միջեւ տագնապի լուծման ուղին սեղանի շուրջ բանակցութիւններն են, եւ Միացեալ Նահանգներ մշտապէս ողջունած են երկխօսութիւնը: «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանը կը հարդորէ, որ այս մասին մամլոյ ատուկիսի ընթացքին, անորադառնալով վերջին օրերուն սահմանին ու հայկական բնակավայրերու ուղղութեամբ ինչպէս կրակոցներուն, յայտարարած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանքեր Մեթիու Միլլըրը:

Միլլըր յայտնած է, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարը թէ՛ Հայաստանի, թէ՛ Ազգայնաւորի ղեկավարներուն հետ հաղորդակցութիւններու ընթացքին հասկցուցած է, որ երկու կողմերուն միջեւ պետք է երկխօսութիւն ըլլայ:

Ան շեշտած է, թէ Միացեալ Նահանգներ պատրաստ են Հայաստանի եւ Ազգայնաւորի միջեւ երկխօսութիւնը դիրքացնելու համար որեւէ հաւանական դեր խաղալու եւ պիտի շարունակեն ատիկա ընել:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ներկայ իշխանության օրով կը շարունակուի հայրենիքի մասնատումը: Արցախի Հանրապետության անկումն էլ ամբողջական հայաթափումն է, հայաստանեան գերիշխան տարածքներ ազդեցական կանխաձեռնումն է, այժմ սահմանազատման օրակարգին տակ հայրենի նոր տարածքներ զիջելու պատրաստակամություն կը յայտեն այս իշխանությունները:



Գոյաբանական վտանգի առջև կանգնած է Հայաստանի Հանրապետությունը: Թշնամին չի խուսափիր իր նկրտումները բացայայտել՝ Սիւնիքի, Տաւուշի եւ Գեղարքունիքի ուղղություններով: Մինչ իշխանությունները կը շարունակեն իրենց զիջողական քաղաքականությունը, խաղաղության կեղծ օրակարգի անուան տակ:

Պահն է սթափելու, մերժելու այս ազգադալ եւ հայրենակործան ընթացքը: Փրկելու հայրենիքը եւ վերականգնելու Հայաստանի Հանրապետության տարածքին ու Արցախի ժողովուրդի բոլոր իրաւունքները:

Մենք հայրենիքէն տարածք չունինք զիջելու: Մենք տարածքներ ազատագրելու խնդիր ունինք ազգովին:

Համահայկական դիմադրություն ծաւալելու ժամն է անյետաձգելիօրէն: Պահն է, որ հեռանա հայրենիք զիջող այս իշխանությունները եւ պետության ղեկը ստանձնեն ազգային ուժերը, որպէսզի դուրս շարժուին թշնամի գործընդդէմ Հայաստանի Հանրապետութենէն եւ որպէսզի վերստին ազատագրուի Արցախը:

Ազգովին, միասնականօրէն կը յաջողինք հեռացնել այս իշխանությունները, ձախողնել համաթուրանական ծրագիրը եւ փրկել հայրենիքը:

ԳՅՐ ԶԱՄԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ՍԵՒ շուկային մէջ ամերիկեան տոլարին փոխարժեքը 89.700 լ. ոսկի է, իսկ «Սայրաֆա»-ի ելեկտրոնային հարթակը՝ 89.500 լ. ոսկի:

●ՈՒԺԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարարութիւնը հրապարակեց վառելանիւթի նոր սակագոյցը, որուն համաձայն՝ 95 օքթան պենզինի սակը սղած է 11.000 լ. ոսկիով, 98 օքթան պենզինը՝ 11.000 լ. ոսկիով, մագուրինը՝ 5000 լ. ոսկիով, իսկ պիւթակազին սակը նուազած է 2000 լ. ոսկիով: Հետեւաբար վառելանիւթի նոր սակերն են. 95 օքթան պենզինի թիթեղին սակը՝ 1.753.000 լ. ոսկի, 98 օքթան պենզինը՝ 1.791.000 լ. ոսկի, մագուրը՝ 1.563.000 լ. ոսկի եւ պիւթակազը՝ 935.000 լ. ոսկի:

●ՎՈՐԶՊԵՏԻ պաշտօնակատար Նեժիպ Միքաթի երկը ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Եոաննա Վրոնցեան, որուն հետ քննարկեց Նիւ Եորքի մէջ Ապահովութեան խորհուրդի անդամներուն հետ ունեցած անոր հանդիպումին եւ թիւ 1701 բանաձեւի գործադրութեան, ինչպէս

նաեւ լիբանանեան բանակին տրամադրուելիք օժանդակութեան մասին քննարկումներուն արդիւնքները:

●ԱԶԳԱՅԻՆ ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Շուպրան Պասիլ երկը այցելեց Լիբանանեան ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար, նախկին նախարար Թալալ Արսլանի, որուն հետ քննարկեց ներկայ իրադարձությունները: Պասիլ եւ Արսլան ընդգծեցին քաղաքացիական անվտանգութիւնն ու Լիբանանի կայունութիւնը պաշտպանելու կարեւորութիւնը:

●ՀԶՕՐ Լիբանան համախմբումի երեսփոխան Ղասսան Աթալլա յայտնեց, որ կարելի չէ երկիրը սառեցնել այնպիսի թեկնածուի մը համար, որ անկարող է հանրապետութեան նախագահ ընտրուիլ:

●ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ դիմադրութեան պլոքի երեսփոխան Հասան Իզզետտին յայտնեց, որ իրենք թշնամի Իսրայէլի դէմ արձանագրուելիք յաղթանակէն բաւական մօտ կը գտնուին:

ՖԻՐԵՍԱ, ՅՈՐԳԱՆԱՆ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Սթեֆան Սեժուանէ յայտարարեց. «Իսրայէլի վրայ պէտք է ճնշում բանեցնել եւ թերեւս պատժամիջոցներ հաստատել՝ Կազա մարդասիրական օժանդակութիւնները հասցնելու համար միջանցքները բանալու համար»:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Պաղեստինեան Համաս շարժումը յայտարարեց, որ շարժումը Գահիթի մէջ բանակցութիւններու վերջին փուլի ընթացքին ստանձնած է Իսրայէլի կեցածքը:

Համաս, ողջունել է տեղ միջնորդներու թափած մեծ ջանքերը, նշեց. «Իսրայէլեան կեցուածքը կը շարունակէ յամառութիւնը ըլլալ, եւ չընդառաջեց մեր ժողովուրդի եւ մեր դիմադրութեան պահանջներէն որեւէ մէկուն: Հակառակ այդ իրողութեան, շարժումի ղեկավարութիւնը ամենայն պատասխանատուութեամբ ու հայրենասիրութեան կը սերտէ ներկայացուած առաջարկը եւ սերտելը աւարտել է տեղ իր պատասխանը պիտի դրկէ միջնորդներուն»:

Լաւատեղեակ աղբիւրներ իսրայէլեան պետական պատկերասփիւռի կայանին յայտնած են. «Գահիթի քննարկումները ճիշդ ուղղութեամբ կ'ընթանան, սակայն հարցը կրնայ ժամանակի կարտօսիլ»:

Իսրայէլեան ընդդիմութեան ղեկավար Եայիր Լափիտ Ուաշինկընի մէջ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պլինքընի հետ իր որակումով «արդիւնաւետ ժողով»-էն ետք յայտարարեց, թէ գերիներու փոխանակման գործարքին շուրջ համաձայնութեան գոյացումը դժուար է, սակայն տակաւին կարելի է: «Դժուար գործարք է... կրնայ մեզի հաճել չըլլալ, սակայն կարելի է գայն կնքել, եւ պէտք է գայն կնքել», ըսաւ ան՝ անելցնելով. «Գերիներու գործարքը տակաւին կարելի է, եւ Իսրայէլի մէջ կան քաղաքական տարրեր, որոնք ատոր վրայ կ'աշխատին»:

ՆԵՐԱՆԻՍՅՈՒ. «ՈՒՖԱՅԻ ՎՐԱՅ ՅԱՐԶԱԿՈՒՄԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐՈՒՅՑԱՒ»

Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու յայտարարեց, որ Ռաֆահ իսրայէլեան ներխուժման ժամկետը ճշդուած է:

«Այսօր Գահիթի մէջ բանակցութիւններուն վերաբերեալ մանրամասն զեկուցում ստացայ, եւ մենք անդադար կ'աշխատինք իրագործելու մեր նպատակները, որոնք գլխաւորները բոլոր գերիներու ազատ արձակումն ու Համասի վրայ ամբողջական յաղթանակի արձանագրումն է»:

«Այդ յաղթանակը կը պահանջէ մուտք գործել Ռաֆահ եւ ողջացնել այդտեղ գտնուող ահաբեկչական փաղանգները: Ատիկա պիտի կատարուի: Ժամկետը ճշդուեցաւ», յայտարարեց Իսրայէլի վարչապետը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մեթիւ Միլլըր, մեկնաբանելով Նեթանիահուի յայտարարութիւնը, յայտնեց. «Միացեալ Նահանգներ տեղեակ չգարձան Ռաֆահ իսրայէլեան ներխուժման ժամկետն»:

Միլլըր լրագրողներուն ըսաւ, որ Ուաշինկընը բացարձակապէս չ'ուզեր ներքին տեղահանուած պաղեստինցիներու վերջին ապաստանարանը եղող Ռաֆահ լայնածաւալ ներխուժում մը տեսնել:

Փենթագոն հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց, որ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Լոյս Ծորը իր իսրայէլացի պաշտօնակից Եոան Կալանթի հետ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է:

Օսթին Կալանթի հետ խօսած է՝ քննարկելու համար Կազա մարդասիրական օժանդակութիւնը անելցնելու հրատապ կարիքը, ներառեալ Իսրայէլի նախարարաց պատերազմական սեղմ խորհուրդի համաձայն գտնուած քայլերու գործադրումը:

Երկու նախարարները քննարկած են իսրայէլեան բանակի «Միջազգային կեդրոնական խոհանոց»-ի աշխատակիցներուն վրայ «ողբերգական յարձակումին» շուրջ հետաքննութիւնը, ինչպէս նաեւ այդպիսի դէպքերու կրկնութեան արգելումը երաշխաւորելու գործնական քայլերու կարիքը:

Փենթագոն նաեւ նշեց. «Կալանթի իսրայէլեան բանակին Կազայի որոշ մասերէն հեռացման եւ Համասի դէմ իսրայէլեան արշաւի ապագային վերաբերեալ մանրամասնութիւններ ներկայացուց»:

ՃԻՒՆԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆ

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2024-ԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ

Պիտի պատարագէ, պատգամը ուղղէ եւ մատուցի օրհնութիւնը կատարէ՝

ԳԵՐՇ. ՏԵՐ ՇԱՅԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆ Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին

- Ժամերգութիւն՝	Ժամը 8:30-ին
- Ս. պատարագ՝	Ժամը 10:00-ին
- Զարոգ՝	Ժամը 11:15-ին
- Մատաղօրհնէք՝	Ժամը 12:00-ին

Հրակիրուած է հաւատացեալ մեր ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեանց եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԳՅՐ «ՀՐԱՅՐ ԴԺՈՒՔ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՐԱՅՐ ԴԺՈՒՔԻ ԾՆՆԴԵԱՆ 160-ԱՄԵԱԿԻ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

- Պատգամ
- Գեղարուեստական յայտագիր
- Տեսերիւի գուցադրութիւն

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 13 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Արագածի ակումբին մէջ:

ՄԵՐ ԳՈՒԼՅԱԾԵԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ՀԱՐՎՈՐԿԱՆ ՄՐՅԱՆՔԻ 20-ԱՄԵԱԿ

ՄԻՏԱՆԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ «ԱՐԵՐԸ՝ ՆԵՐԵԼՉԱՆ ԱՂԲԻՒՐ» ԳԻՐԵԻ ԵՆՈՐՀԱԳԱՆՂԵԱ

Պատգամատու ՅԱԿՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՄԻ

Տեղի կ'ունենայ Գինզաթի, 11 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Ազգային Առաջնորդարանի «Երջ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

Քրտեր

ԵՆՈՐՀԱՏԱՆԻՒՆ

ՓՐՈՖ. ՀՐԱՆՈՅԸ ՅԱԿՈՐԵԱՆԻ ԵՌԱՎԱՏՈՐԻՆ «ՀԱՅՐԵՆԻՔ-ՄՓՈՒՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱՅ ՈՒՂԻՆ (2008-2018)»

ՀԱՐՈՒՆ ԿԱՌՄԱՆ. ՀԱՐՈՒՆ ԿԱՌՄԱՆ. ՀԱՐՈՒՆ ԿԱՌՄԱՆ.

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 15 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, «Ազգային»-ի «Փիւնիկ» սրահին մէջ:

Առցանց Լսարան

ԱԶԳԱԿ օՐԱՅԵՐԸ

Գինզաթի, 11 Ապրիլ 2024-ին, Պէյրուքի ժամանակացոյցով ժամը 18:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ կամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

2020-ԷՆ ԵՏՔ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՐՁԱՆԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ

Եղիա Թաշճեան
Միջազգայնագետ - Պէյրուքի Ամերիկեան համալսարան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՐՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՉՊԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐԸ



Մարզային շրջանները տուած այցելություններու եւ ունեցած հանդիպումներու ծիրին մէջ ԶՅԴ Գերագոյն մարմինի անդամներ եւ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ տեսակցութիւններ ունեցան Մարտունի եւ Զրազդան քաղաքներուն մէջ: Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքին մէջ ԶՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթելեան, խմբակցութեան ղեկավար Սէյրան Օհանեան, պատգամաւորներ՝ Աղուան Վարդանեան, Արման Ղազարեան, Զրիստիս Վարդանեան, Թալէս Ստեփանեան եւ Գեղամ Մանուկեան, հանդիպումին ընթացքին խօսեցան Տաւուշի մէջ հայկական գործերը եւ քաջելու երկարամիտութիւնն ու խորքային բոլոր հետեանքներուն մասին, քննարկեցին օրուան իշխանութեան առաջարկած վտանգաւոր օրակարգներուն հանրային դիմադրութիւնն ցուցաբերելու կարելիութիւնը եւ ներկայացուցին ճգնաժամային իրավիճակը յարթահարելու ուղիները:

Շար.ը՝ էջ 6

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՏԵԱՆԻ ԵՐԱՉԸ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՑԻՆ ԻՐ ԱՐՈՒԲԵՏԱԳԷՏ ԸՆԿԵՐՆԵՐՆ ՈՒ ԱՇՎԿԵՐՏՆԵՐԸ. ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ «ԿԱՐԻՆ» ՀԱՄՈՅԹԻ ՊԱՐԱՄՐԱՎՅԻՆ



Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան Գեղարքունեանական դաստիարակութեան եւ մշակոյթի մասնապատանեակ կեդրոնին մէջ կայացաւ «Կարին» աւանդական երգի-պարի խումբի պարասրահի բացումը, որ նուիրուած է 44-օրեայ պատերազմին զոհուած Յարութիւն Ստեփանեանի յիշատակին: Ան եղած է «Կարին» աւանդական երգի-պարի խումբի յենասիւնը:

Հայաստանի ժողովրդական արուեստագետ, Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի փրոֆեսոր է «Սայաթ-Նովա» մշակութային միութեան ղեկավար Թովմաս Պողոսեան բացման խօսքին մէջ Նշեց, որ պատմութիւնը կը կերտեն ոչ թէ ժողովուրդները, այլ՝ անոնց արժանի գաւակները, որոնցմէ են եւ «Կարին» խումբի հիմնադիր Գագիկ Գինոսեանը եւ Յարութիւն Ստեփանեանը:

«Ըստ Գինոսեանի նախատեսած ծրագրին, այս պարասրահը ինքը պէտք էր անուանակոչէր Յարութիւն Ստեփանեանի անունով, աւանդ չհասցուց: Այսօր մենք, որ կողմուած ենք անոր ծրագրերը եւ գործերը շարունակելու, հպարտութեամբ կը կատարենք իր իղծը: Խորին երախտագիտութեան խօսքերու արժանի են նաեւ այս մշակութային մեծ կեդրոնի երկարամեայ տնօրէն Սամուէլ Բալոյեանն ու ներկայիս արժանաւոր ղեկավար Տիգրան Բալոյեանը, որոնք ընդամենը հինգ տարեկան ծրագրի իրագործումը», Նշեց Պողոսեան:

Գագիկ Գինոսեանի դուստրը՝ «Կարին» համոյթի անդամ Ծովիկար Գինոսեան, տեղեկացուց, որ իր հայրը շատ մեծ նուիրումով ի սկզբանէ կը ձգտեր, որ կատարուէր հիմնական վերանորոգում, եւ բոլորը ունենային Յարութիւն Ստեփանեանի անուան պարասրահ:

Շար.ը՝ էջ 6

ԶՅԴ ԱՐՑԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԵԱՍԲ ԲՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՀԱՅ ԿՆՈՋ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ-ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՋ» ՆԻԹՈՎ



Վերջերս ԶՅԴ Արցախի երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ բննարկում՝ «Հայ կնոջ դերը հասարակական - քաղաքական կեանքին մէջ» նիւթով: Բննարկումին ներկայ գտնուեցան՝ Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ, ՀՅՄԻ Կեդրոնական վարչութեան, Հայաստանի Երջանային վարչութեան եւ Արցախի միաբանի ընկերակիներ եւ ՀՅՄԻ-ուհիներ, ԶՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի եւ կառույցի ընկերներ, ՀՀԿՄՄ Արցախի գրասենեակի անդամներ, ՀՅՄԻ Արցախի մասնաճիւղի անդամներ, ԶՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան, ԶՅԴ Արցախի երիտասարդական միութեան եւ ԱՊՄ ընկերներ:

Բննարկում-հանդիպումին խօսքեր արտասանեցին՝ ՀՅՄԻ Արցախի Երջանային վարչութեան ատենապետուհի Մելանիա Բալայեանը, Հայաստանի Կար.ը՝ էջ 6

«ԱՐՑԱՆ ԱՊՐՈՒՄ Է» ԽՈՐԱԳՐՈՎ ՑՈՒՅԱՐԱՆԴԵՍ «ԹԵՔԵԱՆ» ԿԵՂՈՆՆԻՆ ՄԵՋ

«Թեքեան» կեդրոնին մէջ բացումը կատարուեցաւ «Արցախի ապրում է» խորագրով ցուցահանդէսին, որուն ընթացքին միատուած ձեռով ներկայացուցեցին Հարութի ստեղծագործական կեդրոնի սաներուն ձեռնարկն աշխատանքները եւ լրագրող, արցախեան ազատամարտիկ Չոհրապ Ընդոյեանի՝ Արցախի պատմական մշակութային յուշարձաններու լուսանկարները:

Հարութի ստեղծագործական կեդրոնը ցուցահանդէս-վաճառքին ներկայացաւ բազմապիսի աշխատանքներով, որոնք ընդգրկեցին՝ գորգագործութիւն, ասեղնագործութիւն, ուլունքագործութիւն, խեցեգործութիւն, գեղանկարչութիւն եւ այլն: Իւրօրինակ գործերը արտացոլացուցին հայկական ինքնութիւնն ու մշակութային ժառանգութիւնը:

Ցուցահանդէսի բացման հանդիսութեան ողջունի խօսքով հանդէս եկաւ «Թեքեան կեդրոն» հիմնադրամի տնօրէն Արմէն Ծովիկեանը: Անդրադառնալով օրուան խորհուրդին՝ ան մասնաւորապէս Նշեց, որ Արցախը կը շարունակէ ապրիլ, եւ ցուցահանդէսի մասնակիցները անոր վառ վկայութիւնն են: «Պէտք է պահպանենք Արցախի Հանրապետութեան պետական խորհրդանիշները, որոնք մեր յաջողութիւններուն գրաւակնը պէտք է կրկին ըլլան, եւ վստահութիւնն ու համոզմունքը երբեք պէտք չէ մեզ դաւաճանեն: Արցախի Հանրապետութիւնը միշտ պէտք է ապրի», ասեց ցուցահանդէսը:

Հարութի ստեղծագործական կեդրոնի տնօրէն Իրա Թամրազեան ներկայացնելով հաստատութեան պատմութիւնն ու գործունէութիւնը՝ յատկանշեց ազգայինը պահպանելու եւ սերունդներուն փոխանցելու գաղափարախօսութիւնը: «Կը փորձենք մեր եկեղեցիները, խաչքարերն ու յուշարձանները, նոյնիսկ արցախեան բնութիւնը մեր աշխատանքներուն մէջ վերարտադրել՝ օգտուելով լուսանկարներէն, որովհետեւ, ցաւօք, ներկայիս բնօրինակներէն օգտուելու կարելիութիւն չունինք», ըսաւ տիկին Թամրազեան:

Հարութի ստեղծագործական կեդրոնը առաջին անգամն է, որ ցուցանուէրը վաճառքի կը հանէ, 420 աշակերտներու անվճար ուսուցանումը կարելի դարձնելու եւ կեդրոնը պահպանելու համար:

Լուսանկարիչ Չոհրապ Ընդոյեան շնորհակալութիւն յայտնեց «Թեքեան» կեդրոնին նմանատիպ մշակութապահպան ձեռնարկները իր հովանիին տակ առնելուն եւ խրախուսելուն համար: Հեղինակը, ներկայացնելով լուսանկարները՝ Նշեց, որ իր 25 տարեան աշխատանքի որոնք մէջ պատկերած են Արցախի պատմական մշակութային յուշարձանները, որոնցմէ շատերը արդէն ոչնչացուած են թշնամիին կողմէ:

Հարորդեք, որ «Արցախի ապրում է» խորագրով ցուցահանդէս-վաճառքը բաց պիտի մնայ մինչեւ 10 ապրիլ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՐՑԱՆԻ ԹԵՄԻՆ ՅՈՐԴՈՐԵՑ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԲԱՐՉՊԱՋԱՅՆԵԼ ԱՐՑԱՆՑԻՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ



Ամենայն Հայոց կաթողիկոս Գաբրիէլ Բ. այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ ընդունեց Արցախի թեմի Թեմական խորհուրդի անդամները՝ թեմակալ առաջնորդ Վրթանէս եպս. Արքահամեսի գլխաւորութեամբ:

Հանդիպումին, ըստ Մայր Աթոռի լրատուական բաժանմունքին, քննարկուեցան Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, անոնց ընկերային կացութեան եւ բարոյա-հոգեբանական վիճակին առնչուած հարցեր: Անդրադարձ եղած է նաեւ եկեղեցւոյ կողմէ իրականացուող աշակերտեան ծրագիրներուն:

Կաթողիկոսը Արցախի թեմի անդամները յորդորեց շարունակել կարելի բոլոր միջոցները գործողութիւ միջազգային ու միջկեղեցական կառուցելու առջեւ բարձրաձայնելու Արցախի ժողովուրդի իրաւունքներու ապահովման, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան հիմնահարցերը, Նշուած է հարորդագրութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ԴԻՄԱՆԱԳԵՏ ՏԻՍԱ ԱՐԳԱՐԻ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԸ

Համաշխարհային նամակաբաշխութեան միութեան 150-ամեակին առիթով տեղի ունեցող «Կիները դրոշմաթուղթերու մէջ» (She Stamps) արշալի ծիրէն ներս հրապարակուած է «Տիսնա Արգար» դրոշմաթուղթի վերաբերեալ տեղեկութիւնն ու դրոշմաթուղթին նկարը:



Տիսնա Արգար 1920-ին Նշանակուած է Ճափոնի մէջ Հայաստանի Ա. Հանրապետութեան պատուոյ հիւպատոս: Ան Հայաստանի առաջին կին դիւանագետն է եւ աշխարհի մէջ՝ առաջին դիւանագիտական պաշտօն վարող կիներէն մէկը:

Յայտնենք, որ Համաշխարհային նամակաբաշխութեան միութիւնը ՄԱԿ-ի մաս կազմող մասնագիտական հիմնարկութիւն մըն է, որուն կ'անդամակցի 192 պետութիւն: Հայաստան 1992-էն ի վեր այն միութեան անդամ է:

«ՆՈՒՆ ԳՈՅՆԸ» ԺՎՊԱԿԵՆՈՎ ԵՆՈՒՆԵՍՔՈՒ ԿԵՂՈՆՆԻՆ ՄԵՋ ՄԵԿԵՆԱԿԵՑԻՆ ՍԵՐԳԷՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՅՈՒՆԵՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ



ԵՆՈՒՆԵՍՔՈՒ կեդրոնին մէջ 3 ապրիլին մեկնարկեցին Սերգէյ Փարաջանովի 100-ամեակին նուիրուած յոբելեանական ձեռնարկները, որուն մասնակցեցաւ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Ժաննա Անդրեասեանի գլխաւորած պատուիրակութիւնը: Այս մասին հարորդագրութեամբ տեղեկացուց կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութիւնը:

Ձեռնարկներուն մեկնարկը տրուեցաւ Փարաջանովի «Նռան գոյնը» ժապաւէնի ցուցադրութեամբ,

Շար.ը՝ էջ 6

ՍՈՒՐԻԱ

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՔԱՆՇԱՆ»՝ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՆԱԿԱՆՆԵՐ ԱՐԿԱԳԻ ՏՕՆՈՅԵԱՆԻՆ

Յինգաբքի, 4 ապրիլ 2024-ի երեկոյան, Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ Մակար արք. Ազգարեանի եւ Ազգային իշխանութեան հրաւերով, Հայաստանի Մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավար, գնդապետ Արկադի Տոնյեանի ուղեւորը տեղի ունեցաւ Ազգ. առաջնորդարանի դահլիճին մէջ:



Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան եւ Ազգ. վարչութեան ատենապետ ժողովրդի Ռէստան բարի գալուստ մարտնչ Ներկանուն՝ յայտնելով, որ Սուրիոյ պատերազմի դառն օրերուն զուգահեռ սուրիահայերս ապրեցանց հպարտութիւնն ու ուրախութիւնը այն հիմնարկի եւ գնահատանքի խօսքերուն, որոնք մեր արար հայրենակիցները կ'արտայայտին Հայաստանէ ժամանած Մարդասիրական առաքելութեան խումբին տարած անապահով տարածներու ականագործման եւ բժշկական ծառայութիւններուն մասին:

Ան նշեց, թէ այսօրուան առիթը անսահման է գեղեցիկ զուգահեռութեամբ մը կը համընկնի ՄԱԿ-ի Ընդհանուր խորհուրդի պաշտօնական յայտարարութեան, որուն համաձայն, 4 ապրիլը յայտարարուեցաւ ականներու մասին իրազեկութեան եւ ականագործման գործընթացի միջազգային օր:

Ան յաջողութիւն եւ արդիւնաշատ գործունեութեան սոր աշխատաշրջան մարտնչ գնդապետի նուիրական առաքելութեան:

Ազգային վարչութեան ատենադպիր Մարալ Գալայճեան-Սեմերճեան հակիրճ կերպով ներկայացուց գնդապետին 27 ղեկնմաներ 2018-էն սկսեալ Սուրիոյ Հայկա քաղաքին մէջ տարած գործունեութիւնը՝ որպէս ՀՀ Մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավարի:

Ան յայտնեց, որ Հայկաի մէջ Մարդասիրական առաքելութեան խումբին նախապատրաստական ամենափոքր աշխատանքներ մինչեւ դաշտային ամենամասնագետը գործին ընդմէջէն իմացանք գնդապետին նուիրական ծառայութեան մասին եւ ծանօթացանք խիզախ ղեկավարին ու արի հայորդիին, որ շնորհիւ իր աշխատանքային բժախնորութեան, լրջութեան ու ամենակարեւոր, մարդասիրական կոչումին տեղը ըլլալուն՝ նուաճեց հայկա-հայութեան սերն ու պատկանանքը:

Ան յիշեց, որ 6 փետրուար 2023-ին Հայկաը հարուստած երկրաշարժի օրերուն գնդապետը օգնութիւն ցուցաբերեց տուժած տեղացիներուն, Մարդասիրական առաքելութեան խումբը ընդգրկեց շարժաբաններու կազմին մէջ եւ Հայկաի մէջ իրականացուց շէնքերու վթարային վիճակի գնահատման, նշագրման եւ բնակչութեան անվտանգութիւնը ապահովելու աշխատանքներ, ինչպէս նաեւ ստանձնեց Հայաստանէն ժամանած որոնողափորկարարական խումբի կեցութեան աշխատանքները, օգնեց հայկական եկեղեցիներուն մէջ ապաստան գտած հայ համայնքի գաւակներուն, Ազգային պատասպարանին եւ Հայ ծերանոցին:

Այնուհետեւ Արմէն արք. Գալայճեան կարողաց սրբազան հօր օրհնութեան եւ

գնահատանքի գիրը:

Ապա, Մակար արք. Ազգարեանի նախագահութեամբ, Ազգային վարչութեան որոշումով եւ առաջնորդ սրբազան հօր ձեռամբ, Բերիոյ հայոց թեմի «Ծառայութեան բարձրագոյն շքանշան»-ով եւ օրհնութեան ու գնահատանքի գիրով պարգեւատրուեցաւ Հայաստանի Մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավար, գնդապետ Արկադի Տոնյեանը:

Ան իր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց սրբազան հօր, Ազգային իշխանութեան, թեմի ազգային մարմիններուն եւ միութիւններուն, որոնք հակառակ բոլոր դժուարութիւններուն՝ նուիրականութեամբ միասնաբար յառաջ կը տանին իրենց վստահուած առաքելութիւնը:

Սրբազան հայրը իր կարգին շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց գնդապետ Արկադի Տոնյեանին՝ անցնող վեց տարիներուն ՀՀ Մարդասիրական առաքելութեան խումբի գործակիցներուն հետ մատուցած նուիրական ծառայութեան համար: Իսկապէս՝ արժանի եւ իրաւ:

Սրբազան հայրը մեծազոյն պատիւը համարեց սփիւռքի մէջ հայրենիքի ներկայացուցիչի գտնուելը եւ ծառայութեան ճամբով օգնութեան ձեռք երկարելը պետական եւ զինուորական մակարդակներով եւ ժողովուրդի ապահովութիւնը ձեռք բերելու առաջադրանքով՝ հակառակ գնահատման պատժամիջոցներով Սուրիոյ արգելափակուած ըլլալուն:

Ան ըսաւ, որ այն, ինչ որ հայրենի ղեկավարութիւնը որպէս սոր առաքելութիւն որոշած է գնդապետին համար, վստահօրէն շատ աւելի անհրաժեշտ է հայրենիքի հզօրացման եւ ապահովութեան ի խնդիր:

Սրբազան հայրը յայտնեց, որ իր առաջնորդութեան մէջ ու կէս տարուան ընթացքին, յարաբերութեան ճամբով եղբայրական կապ ստեղծուեցաւ գնդապետին հետ, որուն ճամբով ի յայտ եկան անոր հայու ոգին, նախանձախնորութիւնը, արժանապատուութիւնը եւ գործին նկատմամբ լրջութիւնը, որոնք մեզ աւելիով կը զօրացնեն:

Առաջնորդը արօթեց, որ Ամենակալը իր հովանին անպակաս ընէ, գնդապետին քայլերը առաջնորդէ եւ աստուածային շնորհներով զինք պայծառացնէ:

Աւարտին կոկիկ հիւրասիրութիւն կատարուեցաւ:

ՖՐԱՆՍԱ

ԻՆՆԱ ՍԱՀԱԿԵԱՆԻ «ԱՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՅԸ» ԺՊՊԱԲԵՆԸ ԱՐԺԱՆԱՅԱԾ Է ՖՐԱՆՍԱԿՈՍՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԼԽԱՒՈՐ ՄՐՅԱՆԱԿԻՆ

Կազմակերպութեամբ Սան Լուի ֆրանսական ուսումնարանին, աջակցութեամբ Իտալիոյ մէջ Ֆրանսա-խօս դեսպանութիւններուն, վերջերս տեղի ունեցաւ Ֆրանսախօսութեան 14-րդ փառատօնը, որուն ընթացքին բեմադրիչ Իննա Սահակեանի «Արորայի լուսաբայ» գծակարային վաւերագրական ժապաւենը արժանացաւ դատական կազմի գլխաւոր մրցանակին: Ժապաւենը ստացած է պետական ֆինանսական աջակցութիւն՝ Հայաստանի Հանրապետութեան կըրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան կողմէ: Անկախ ստեղծուած է «Չօրեան» ուսումնարանի գիտական աջակցութեամբ եւ Հայոց ցեղասպանութեան բանաւոր պատմութեան արխիւին հիման վրայ:



ՅՈՒՍՍՍՆ

«ՉՄԻՒՆԻԱԸ Կ'ԱՐՏԱՍՈՒԷ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ՅԻՇԷ», ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Կազմակերպութեամբ Համազգայինի Շրջանային վարչութեան, 13 մարտին Ֆիքսի «Արամ Սանուկեան» ակումբի «Թագուր եւ Բոգա Աւետիքեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Վասիլիքի Փիթուկիի «Չմիւն-նիան կ'արտասուէ, Հայաստանը կը յիշէ» գիրքին ներկայացումը:

Ձեռնարկին սկիզբը ներկաները մէկ վայրկեանի յոտնկայս լուրջութեամբ յարգեցին Համազգայինի «Յակոբ Փափագեան» երգչախումբի անդամ Ռեբեկա Պարագեանի յիշատակը:

Համազգայինի անունով ժազ Տամատեան նշեց, որ գիրքը բացառիկ կերպով կը միաւորէ 1915-ի ու 1922-ի եղեռնագործութիւնները, անցնելով, որ գիրքը յօրինուածք մըն է՝ հիմնուած իրական դէպքերու վրայ:

Գրող, թարգմանիչ, հեռատեսիլի եւ ծայնասփիւռի տնօրէն Սիւսի Քափան ներկայացուց գիրքին բովանդակութիւնը՝ անցնելով, որ հոն կը բացայայտուին անծանօթ դրուագներ: Ան շեշտեց, որ իր պատմութիւնը յիշող ժողովուրդը ապագայ չունի: Այնուհետեւ գործարուեցաւ գեղարուեստական



յայտագիր, որուն յաջորդեց հաստորին շնորհահանդէսը:

Աւարտին ելոյթ ունեցաւ գիրքին հեղինակը, որ շնորհակալական խօսքեր ուղղեց կազմակերպիչներուն ու ներկաներուն՝ յայտնելով իր սիրոյ զգացումները հայրենու եւ հայոց լեզուին հանդէպ: Ան ըսաւ, որ լայնածաւալ հետազոտութիւնները ետք զգացած էր «պատուոյ պարտք» մը:

ՆՈՐ ԶՈՐԱ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏԳԱՍԱՒՈՐ ԳԵՂԱՐԴ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍԻՓԱՆ ԱՐՔ. ԲԵՉԵՃԵԱՆԻՆ ՀԵՏ

Իրանի Իսլամական խորհրդարանին մէջ Սպահանի Իսլամային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր Գեղարդ Մանսուրեան 17 մարտին Ազգային առաջնորդարանի մէջ իր առաջին պաշտօնական հանդիպումը ունեցաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Սիւսիան արք. Բեչեճեանի հետ:

Առաջին հերթին ան շնորհաւորեց սրբազանը արքութեան տիտղոսին արժանանալուն համար: Սրբազան հայրը, իր կարգին, շնորհաւորեց անոր պաշտօնը եւ մարտնչ յաջողութիւնը:

Խօսելով խորհրդարանի գործունեութեան դժուարութիւններուն եւ այն մեծ պատասխանատուութեան մասին, որ դրուած է պատգամաւորներուն ուսերուն վրայ, սրբազան հայրը յոյս յայտնեց, որ նորընտիր պատգամաւորը, ինչպէս միշտ պէտք է ըլլայ գործունեայ եւ հետեւողական իր աշխատանքներուն մէջ եւ ժողովրդի կողքին ըլլալով՝ բարձրաձայնեւ անոր խընդիրները:

Գեղարդ Մանսուրեան տեղեկութիւններ տուաւ Իրանի Իսլամական խորհրդարանի ընտրութիւններուն ընթացքին եւ ընտրական գրասենեակի գործու-



Ներութեան վերաբերեալ: Անորադարձ կատարուեցաւ նաեւ ընտրութիւններուն հայ համայնքի մասնակցութեան:

Հանդիպման ընթացքին երկու կողմերը իրենց գոհունակութիւնը յայտնեցին իրանահայ համայնքին՝ թէ՛ խորհրդարանական, եւ թէ՛ Բանիմացներու խորհուրդի ընտրութիւններուն գիտակից եւ խոնարհմամ մասնակցութեան համար:

ՔԱՆԱՏԱ

ՎԱԷԷ ԵՒ ԱՍՏՂԻԿ ԱՆՏՈՆԵԱՆՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆ 100 ՀԱՉԱՐ ՏՈՒԱՐԻ ՆՈՐԱՍԵՂՎՉ ՀԻՄՆԱԳԻՐԱՄԸ ԶԱՐԿ ՊԻՏԻ ՏԱՅ ՔԱՆԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՀՉՕՐԱՅՄԱՆ

Թիֆլիսի եւ Կարինէ Անտոնեաններ, համագործակցութեամբ ՀՀ-ի Վանքուժըրի «Սիմոն Վրացեան» կոմիտէին, յայտարարեցին Armenian Endowment Fund-ի (Թորոնթօ) հովանիին ներքեւ 100 հազար տոլար նուիրատուութեամբ անձեռնմխելի հիմնադրամի մը յառաջացումը, որ պիտի կոչուի «Վահէ եւ Աստղիկ Անտոնեան հիմնադրամ»:

Հիմնադրամի տարեկան շահոյթը պիտի յատկացուի Վանքուժըրի Հայ կեդրոնին մէջ գործող կազմակերպութիւններուն եւ տեղույն հայ համայնքի կրթական, բարեփոխական եւ երիտասարդական ծրագրերուն: Եկամու-

տնէ որոշ բաժին մը նպատակաւորած պիտի ըլլայ ՀՀ-ի Բիւրոյի Հայաստանի եւ Արցախի ծրագրերուն, ինչպէս նաեւ ՀՀ-ի Զանաւորայի Կեդրոնական կոմիտէի համաքաղաքական ծրագրերուն: Անտոնեան ընտանիքը պիտի շարունակէ սատարել եւ անցընել հիմնադրամին մայր գումարը տարուէ տարի:

Հիմնադրամի ստեղծումով Զանաւորայի տարածքին գարկ պիտի տրուի ազգային մեր մշակոյթի տարածման եւ համայնքային մեր կառոյցներու հզօրացման:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԷԼԵՆ ԱՍԱՏՐԵԱՆ ԿԼԵՆՏԵՅԻՆ ԶԱՐԱԶՊՊԵՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ

Կլենտէյի Զաղաքապետական խորհուրդը 2 ապրիլի իր ժողովին ընթացքին քաղաքապետ ընտրեց Էլեն Ասատրեանը, որ պիտի փոխարինէ Տեն Պրոքսեն:



Ասատրեան, որ 2022-ի յուլիսին Կլենտէյի Զաղաքապետական խորհուրդի ընտրութիւններուն յաղթանակ արձանագրելով՝ անդամ դարձած էր խորհուրդին, կը հանդիսանայ առաջին ամերիկահայ կիւն, որ կ'ընտրուի այդ պաշտօնին:

Նշենք, որ Կլենտէյը Լոս Անճելէս գաւառի չորրորդ մեծագոյն քաղաքն է:

Ասատրեան շնորհակալութիւն յայտնեց իրեն գորակցողներուն՝ անցնելով, որ այս յաղթանակը պահանջեց խմբային աշխատանք եւ հաստատակամութիւն: Ան ըսաւ, որ քաղաքի բոլոր բնակիչները եւ շահագրգիռ կողմերը կրնան հպարտանալ այս յաջողութեամբ, որ արդարութեան արտայայնութիւնն է:

Յայտնենք, որ Ասատրեան դպրոցական տարիներն ի վեր աշխուժ մասնակցութիւն բերած է քաղաքացիական կեանքին՝ ղեմ ղնելով խտրական օրէնքներու՝ պատասխանատու պաշտօններ ստանձնելով գաղապարական յանձնախումբերու եւ մարմիններու մէջ:

«ՀՄԸՄ-Ի ԱՐՑԱԽ ՀԻՄՆԱԳՐԱՄ»-ԻՆ Ի ՆՊԱՍՏ ԶԵՆՆԱՐԿ



Հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան, կազմակերպութեամբ «ՀՄԸՄ-ի Արցախ Հիմնադրամ»-ի յանձնախումբին, 23 մարտին ՀՄԸՄ-ի Կլենտէյի «Արարատ» մասնաճիւղի «Բարդասարեան-Շահինեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հիմնադրամին նուիրած ընթրիքի երեկոյ՝ մասնակցութեամբ ազգային-յեղափոխական երգերու մեկնաբան Գառնիկ Մարգարեանի եւ իր նուազախումբին, ներկայութեամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Սիւր Դաւիթեանի, ՀՀ-ի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Աւօ Բեչեճեանի, ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ՝ Սեդա Գոճայեանի եւ Հայկօ Պարսամեանի, ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան անդամներու, 2024-ի Տիպար ՀՄԸՄ-ական Արամ Պեթարեանի, ՀՄԸՄ-ի մասնաճիւղերու վարչութիւններու, անդամներու եւ ՀՄԸՄ-ականներու: Քաղաքապետի հիւրերու:

ՊԱՏՐԱՍԵՑ՝ ՄԱՐԱԸ ՄԻՍԵՆԱԸ

Շաբ.ը՝ էջ 6

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ...

Շարունակուած 4-րդ էջէն

«Գիւմրիի մէջ Լիկոլ Փաշինեան արդէն բոլոր խաղաքարտերը բացաւ...


Կոտայքի մարզի Զրազդան քաղաքը այցելեցին ԶՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէան...

Քաղաքացիներուն հետ հանդիպումը տեղի ունեցաւ Զրազդանի Տրամաթիքական թատրոնին մէջ...

«Ոսկեպարն ու Տաւուշը միայն ոսկեպարցիներունը եւ տաւուշցիներունը չէ, այլ մեր ժողովուրդինն է...

«ՆՈԱՆ ԳՈՅՆԸ» ԺԱՊՊԵՒՆՈՎ ԵՌՆԵՍՔՈՒ...

Շարունակուած 4-րդ էջէն



որուն յաջորդեց քննարկում՝ Լուիսլուած մեծաւում արւետագետին ստեղծագործական ժառանգութեան:

Մայրաքաղաքի դիտումէն առաջ ողջոյնի խօսքով հանդէս եկան՝ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարար ժաննա Անդրեանեանը...

Փարիզ կատարած այցելութեան ծիրին մէջ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարար ժաննա Անդրեանեանը այցելեց Լատին Ժողովրդական Ժամանակագրան...

Հետոյ Երբեմնական ճեմարաններու հարցերը քննարկելու համար, ժաննա Անդրեանեան Նշեց. «Սերգեյ Փարաշանով ստեղծագործող հանճարի մարմնացում է, մեծաւում վարպետ, որուն ժապարակները խորապէս կը հիացնեն աշխարհի բոլոր հանդիսատեսները...

Ստուգելու դիտումէն ետք կայացաւ քննարկում, որ վարեց Ֆրանսահայ բեմադրիչ եւ դերասան Սերժ Աւետիսեանը...

Պարտաւորութիւնները մեծաւումը քննարկելու համար, ժաննա Անդրեանեան Նշեց. «Սերգեյ Փարաշանով ստեղծագործող հանճարի մարմնացում է, մեծաւում վարպետ, որուն ժապարակները խորապէս կը հիացնեն աշխարհի բոլոր հանդիսատեսները...

Յօրեմեանական ճեմարաններու շրջանակին մէջ ԵՐԻՄԵՅԵՎՈՒԻ կրթարարին մէջ 3-10 ապրիլին պիտի գործէ Լատին Ժողովրդական Ժամանակագրան...

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՏԵԱՆԻ ԵՐԱԶԸ...

Շարունակուած 4-րդ էջէն

Շինարարական աշխատանքները իրականացնելու նպատակով Լոյսիկ կազմակերպուած է դրամահաւաք: «Կարին» եւ «Լեռնապար» համայնութիւնը պատմով աշակերտները նոյնպէս մասնակցած են վերանորոգման աշխատանքներուն եւ շատ բաներ կառուցած են իրենց ձեռքերով:

«Ցարութիւն Ստեփանեան մարդ տեսակը ճանցողը գիտէ, թէ ան ինչպէ՞ս ամէնուր կը տարածէ սեր եւ շքեղութիւն: Անոր յիշատակը այսօր ալ կ'ապրի մեր մէջ: Հայրս նոյնպէս մեծ ոգեւորութեամբ մասնակցած էր շինարարական աշխատանքներուն: Եղած են օրեր, երբ բաւական ուշ ժամու կը զանգահարէինք, կ'անհանգստանայինք, կը հարցնէինք, թէ երբ տուն պիտի գար, իսկ ան կը պատասխանէր, որ դեռ կան ջաւարտուած աշխատանքներ, կ'ուզէր օր առաջ աւարտին հասցնել սկսած գործը, աշխատողներուն կը բերէր քաղցրաւենիք, կը հիրասիրէր եւ կ'օգնէր, որպէսզի պարասրահին բացումը իր արուեստագետ ընկերներուն եւ սաներուն հետ հանդիսարարութեամբ լշէր Ցարութիւն Ստեփանեանի յիշատակի օրը՝ ապրիլի 4-ին: Հայրիկը չկայ, բայց մենք սիրով կը կատարենք այդ յանձնառութիւնը», ըսաւ Ծովինար Գինոսեան:

Ան աւելցուց, որ բոլորը ի սկզբանէ գիտէին Գագիկ Գինոսեանի քայլերուն յաջորդականութիւնը եւ աշխատանքը աւարտած են այնպէս, ինչպէս ան մտադրած էր նախապէս:

«2003 թուականէն Ցարութիւն Ստեփանեան պարած է «Կարին» համայնութիւն: Ան նաեւ լուսակարիչ էր եւ վաւերագրած է համայնի ամբողջ տարեգրիւնը:

րութիւնը 2003-2020 թուականներու ժամանակահատուածին: Բոլոր համերգները, մեծ ու փոքր ճեմարանները, նոյնիսկ արտագնայ շրջագայութիւնները լուսակարած եւ յանձնած է պատմութեան: Բոլորին հետ ան ալ անչափ ուրախ էր, երբ «Կարին» համայնը յարգէր Սպանիոյ մէջ կայացած միջազգային փառատօնին, եւ մեծ ոգեւորութեամբ վաւերագրած՝ այդ իրադարձութիւնը: Ցարութիւնը մեր համայնի պատմութեան անբաժանելի մասն է: Անոր կինը նոյնպէս պարած էր «Կարին»-էն, անոնք ծանօթացած են իրարու հետ այստեղ եւ՝ ամուսնացած: Ցարութիւնին կըքահայրը Գագիկ Գինոսեանն էր: Երբ սկսաւ 44-օրեայ պատերազմը, Ստեփանեան չսպասեց, որ «Կարին»-ի մասնակիցներէն ձեւաւորուի մարտական ջոկատ ուստի օգտուելով առաջին իսկ կարելիութենէ՝ մեկնեցաւ ռազմաճակատ եւ հազարաւոր հերոսներու պէս իր կեանքը գոհեց յանուն հայրենիքի», յայտնեց Ծովինար Գինոսեան:

Վերջապէս, գեղեցիկ ու յարմարաւետ պարտաւոր իր դռները բացաւ բոլորին առջեւ: Այդտեղ առկայ են անհրաժեշտ պայմաններ՝ հայկական պարտուն հաղորդակից ըլլալու եւ սորվելու համար: Պարասրահի բացման արարողութեան ներկայ գտնուեցան նաեւ բազմաթիւ պատանիներ, որոնք հետագային պիտի շարունակեն հայկական պարասրարուստի լուսագոյն աւանդոյնները, որոնք սկսուածներուն կանգնած են Գագիկ Գինոսեանի և Ցարութիւն Ստեփանեանի պէս նուիրեալ հայորդիներ:

ԺԱՍՆՆՅ

ԽԱԶԲԱՆ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 grid with numbers for a crossword puzzle.

ՍՈՒՏՈՔՈՒ 5 1 6 8 2 7 1 7 4 3 9 2 3 4 8 6 5 9 4 8 7 6 grid for a word search.

- ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ 1. Շանկախաւ: 2. Զնեք: 3. Ինձուած ցորենի խուրճ: 4. Հոյակ - Կողոպուտ - Աղամանոյ: 5. Անջարկի թիւզանդակները վառ - Գրաքար՝ ո՞ր: 6. Անջարկ - Գոյ: 7. Երկար - Տոնական քաջօր: 8. Մարտ - Երկրական ինքնաշարժներու մակնշիջ: 9. Անհարկունքներու մասնիկ - Անձնական դերանուն - Երկրի ցիլինդր: 10. Մարտ - Անձնական յառաջ մասի երկար ձող: 11. Փայտի օր քաղցու - Կանգնի՛ր - Գրաքար՝ Երկր: 12. Արթնամարտ - Կրկնուած բաղաձայններ:

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սահմաններով (9x9) կազմուած գնացածը բալկանցաբան խաղի (9x9): Բացառուի սկզբունքները կիրառուող խաղացմանը բառակապի մէջ բռնաճան մը գեղեցիկ՝ այնպէս մը, որ հորիզոնական խաղացմանը շարք, ուղղահայեաց խաղացմանը սահման եւ 9 բառակապի խաղացմանը բաժնի ունենայ 3 են 9 բառակապները՝ խաղացմանը բռնաճան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խաղացման մէջ սկզբունքային արժանուած է բռնաճան մը կրկնել միեւնոյն շարքին, սահմանները բաժնի մէջ: Ակնյալ համար՝ կարգ մը բռնաճաններ իրենց ճգգրտութեամբ սահմաններուն մէջ գեղեցուած են:

- ՈՐԱԿԱՆԻՑՆԵՐ 1. Կրան միջ շարքիցու տարածական - Սիւսնայութի ձեռնարկալիքը: 2. Թատերական հանդերձան - Ալանի կեղծ: 3. Սասնիկ ցեխ - Յիսուսի առաջնախններէ: 4. Կրկնուած բաղաձայններ - Աղբիւր - Տեղական մակբայ: 5. Երկուն - Շաղկապ: 6. Տաւան ինչոք գործերէն - Կրկնուորի տարած: 7. Անուշ - Անձնական դերանուն - Լեցուն: 8. Պատմական: 9. Յոլովակերտ մասնիկ - Մոլդ: 10. Հաստաւական պատմական - Ուղտակ: 11. Անաստաս Ա. կաթողիկոսի ձեռնարկալիքը - Շոք:

ՆԱԽՈՐ ՏԱՄԱՆՅ ԽԱԶԲՈՒ ԼՈՒՌՆՈՒՄԵՐԸ ԽԱԶԲԱՆ ՄԱՏՈՔՈՒ 5 8 3 7 2 1 6 9 4 7 1 6 5 9 4 8 3 2 4 9 2 6 3 8 5 7 1 9 2 4 3 5 6 1 8 7 3 6 8 9 1 7 2 4 5 1 7 5 4 8 2 3 6 9 6 3 1 2 7 9 4 5 8 2 5 9 8 4 3 7 1 6 8 4 7 1 6 5 9 2 3

ՀՅԴ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ...

Շարունակուած 4-րդ էջէն

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակ-ցուխէն պատգամաւոր Քրիստինէ Կարոնեանը, ՀՀԿՄԱ Արցախի գրասենեակի ուսուցչուհի Սուրբ Քարէանը:

Բանաստեղծութիւններուն նախորդեց ՀՀԿ Արցախի երիտասարդական միութեան ԱԳՄ ընկերներու պատրաստած գեղարուեստական ծրագիրը, որուն ծիրին մէջ անոնք ներկայացուցին տեղեկութիւններ նշանաւոր հայ կիններու մասին,

երգեցին մայրերու նուիրուած երգեր, արտաստեղծութիւններ: Այս խախտուական մեծաթիւ մաս կազմեց Լատին Ժողովրդական Ժամանակագրան: Ծրագիրը մեծարանքի երկող էր՝ նուիրուած հայ հերոսական եւ հերոսածին կիններուն, հայ մայրերուն, որոնք հերոսացան հայոց պատմութեան բոլոր ժամանակներուն մէջ:

ԵՆՏ ԱՍԱՏԻՔԱՆ ԿԵՆՏԵՅԻՆ...

Շարունակուած 5-րդ էջէն

Արեւմտեան Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի գործադիր վարիչի պաշտօնը վարած շրջանին Ասատրեան յառաջ մղած էր Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու ջանքերը եւ հանրային վարժարաններու մէջ Տեղականութեան դասաւարտման ընդարձակումը ծրագրելու: Ան եղած է Կլեմենտ Զաքարյանի գրասենեակի, ժամանակի եւ համայնքային սպասարկութիւններուն յանձնարարական անդամ ու տեղեկագետ՝ նոյն շրջանին այլ յանձնախումբներուն, ինչպէս նաեւ՝ Լոս Անձելես գաւառի ընտրողներ արձանագրելու պարտականութիւնը ունեցող յանձնախումբին: Ան մասնակցած է Հայաստանի, Արցախի եւ հայու-

թեան վերաբերող շարք մը քաղաքական ընտրապայքարներու եւ ժողովրդային արշաւներու՝ տեղական, նահանգային եւ դաշնակցային մակարդակներու վրայ: Ան անդամակցած է եւ կը շարունակէ անդամակցիլ համայնքային շարք մը կազմակերպութիւններու եւ եղած է Կլեմենտի Հայ դատի յանձնախումբի գործադիր վարիչը:

Ասատրեան շրջանաւարտ է Զալիֆոյնի համալսարանի Լոս Անձելէսի մասնաճիւղէն, ուր մասնագիտացած է քաղաքական գիտութիւններու եւ միջազգային յարաբերութիւններու ոլորտներուն մէջ:

ՕՐԱՏԵՏՐ

ԱՊՐԻԼ 10

- 1771 - Օսմանի ազգային բարեփոխման, սուլթան Մահմուտի անձնակազմի սեղանաւոր եւ խորհրդական Ցարութիւն ամիրա Պեզեթեֆ, Պոլսոյ մէջ: Հիմնադրուած է Պեզեթեֆ Մայր վարժարանը, եւ Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցն: Մահացած է 1834-ին, Պոլսոյ: 1818 - Օսմանի բարեփոխման Մարտիչ Սանասարեանի, Թիֆլիսի մէջ: Կովկասի եւ Պարսկաստանի միջեւ շոգեհատային հաղորդակցութիւն կազմակերպեց: Իր միջոցներով Կարսի մէջ 1881-ին հիմնուեցաւ Սանասարեան վարժարանը: Մահացաւ 1889-ին, Փարիզ: 1904 - Լազընկացիքի կողմ՝ Սուրաբի ղեկավարութեամբ: 1937 - Օսմանի երգահան եւ խմբավար Հենրիկ Անասեանի, Երեւանի մէջ: 1992 - Արցախի Մարտակերտի շրջանի Մարգարա գիւղին հայ բնակչութեան զանգուածային կոտորածը ազգերիներուն կողմէ:

Պատրաստեց՝ Տ. Ա. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ԱՅՍ ՈՒՐԲԱԹ՝ ՀՄԸՄ - ՇԱՆՎԻԼ

Այս ուրբաթ ժամը 20:00-ին, Մրցույթի «Արբանյակ-ՅՄԸՄ» մարզամշակութային համալիրի «Ատոմ Եւ Սելա Թնճուկեան» դաշտին վրայ, ՅՄԸՄ-ի տղաքը վճռական մրցում մը ունին կատարելիք Շանվիլի դէմ:



Անցեալ կիրակի օր, ՅՄԸՄ շատ լաւ ելոյթ մը ցուցաբերելով 85-93 արդիւնքով յաղթական վերահռչակ Տիք Մըրիսիէն՝ Շանվիլի դէմ առաջին մրցումին:

Ֆայնը 8-ն կրնանք անարտել ուրբաթ օր՝ յաղթելով մեր համակիրներուն ներկայութեան: Վերջիններս պետք է 40 վայրկեան քաջալերեն մեր տղաքը:

Շատ անգամ համակիրներ բազմաթիւ խումբերու քաջալերելու ժամանակ կրնան ժխտական ձեւով ճնշում բանեցնել իրենց խումբին վրայ: Ծիշոյ այս պատճառով ալ մեր համակիրները պետք է մեր մարզիկները քաջալերեն եւ մրցակիցին կամ իրաւարարին նկատմամբ քիչ մը անելի զուսպ ըլլան՝ նկատի ունենալով, որ ունինք «տաք մարզիկներ», որոնք կրնան անգուպելի դառնալ ի վնաս մեր խումբին:

Յամենայն դէպս, առաջին մրցումը յաղթելէ ետք, պետք է մեր տղաքը անելի հանգիստ խաղան մեր համակիրներուն քաջալերանքով՝ հասնելու յաղթանակին:

Շատ հալիլ վստահաբար անելի հանգիստ մրցում մը պիտի կատարէ՝ նկատի ունենալով, որ անցեալ

մրցումին ան դաշտ ներկայացած էր առանց փորձերու մասնակցելու՝ մէկ շաբաթ անելի վիրուսը ըլլալուն պատճառով:

Քաջալերելի էր վերադարձը Կերի Չիլիչեանի, որ 3 ամիսներ անելի հեռու մնացած էր դաշտէն, եւ կը սպասուին իր 3 կետնոց կողմերը՝ պետք եղած ժամանակ: Չեք Լոֆթըն, Տուէյն Ճեքսըն եւ Ճամալ Ճոնզ իրենց փորձառութեամբ պիտի օգնեն տիրանալու վերջնական յաղթանակին, որ խումբը պիտի հասցնէ ֆայնը 4 կամ կիսաարտական հանգրուան:

Խմբապետ ժերար Յատիտեան կիրակի օր բաւական հսկայ մրցակից մը ունենալով՝ յանձին Իպրահիմա Թոմասի, քիչ մը դժուար մրցում մը կ'ունենայ,

բայց իրմէ սպասուածը լի ու լի կատարեց: Կապիթէ (Կեպի) Աճեմեան իր պայքարով եւ առիծի սրտով ուժ եւ քաջալերանք կու տայ իր խմբակիցներուն, բայց ուշադիր պետք է ըլլայ կանուխ ֆաուլեր չկատարելու:

Ծիմի Սալեմի եւ Թանիս Աքքիի գործը թերես երկրորդական է, սակայն նոյնքան կարեւոր է, երբ Ճեյլի Պլեյքի մեծն օտար շատ լաւ մակարդակի մրցակից մը ունիս եւ պետք է պաշտպանես ամեն գնով:

Պետք է զգուշ ըլլալ ամեն տեսակի ֆաուլերէ: Եթէ կրցանք այս մէկը յաջողցնել, ՅՄԸՄ անպայման դրական արդիւնքով կ'աւարտէ ֆայնը 8-ը:

«ԵՆՈՐՈՓԱ ԼԻԿ»

ՎԱՂԸ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - ԱԹԼԱՆՆԹԱ Ա. ՄԷ. ՄԻԼԱՆ - Ա. ԷՍ. ԱՌՄԱ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի «Ենորոփա լիկ»-ի մրցաշարքը հասած է քառորդ արտական հանգրուանին, ուր հասած են 3 խաչակական, 2 անգլիական մէկ գերմանական, մէկ ֆրանսական եւ մէկ փորթուգալեան ակումբներ:



Անգլիոյ «Կարմիրները» Լիվերփուլ, պիտի հիւրընկալէ Իտալիոյ Աթալանթան: Անգլիոյ Բրայտօն Բերնի Գլոբալը գրաւող Լիվերփուլ իր դէմ պիտի ունենայ Պերկամոյի խումբը, որ «Սեփի Ա.»-ի 6-րդ դիրքը կը գրաւէ:

«Չուտ իտալական» մրցումի մը, Ա. ՄԷ. Միլան, որ վերջերս շատ լաւ վիճակի մէջ կը գտնուի, պիտի հիւրընկալէ Ա. Էս. Առմա, որ իր կարգին բաւական բարելաւուած ֆուլթայլ կը կիրարկէ: Միլանի կազմը Բ. դիրքը կը գրաւէ «Զալցխո»-ի, մինչ Առմա 5-րդ դիրքը կը գրաւէ: Գերմանական Պայեր Լեւերքուզը, որ այս տարի

է Սփորթինգ Լիգայնի ետին, մինչ Մարսել վերջին մրցումներուն լաւ վիճակի մէջ չի գտնուիր եւ այժմ կը գրաւէ Ֆրանսայի ախոյեանութեան դասաւորման 8-րդ դիրքը:

շատ լաւ վիճակի մէջ է եւ պատմութիւն կերտելու ճամբուն վրայ, դառնալով «Պոստըլիկա»-ի ախոյեան, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով պիտի հիւրընկալէ Անգլիոյ Ուեսթ Յամը: Լեւերքուզը, որ 40 մրցումներէ ի վեր անյաղթ միակ խումբն է Եւրոպայի, պիտի մրցի Ուեսթ Յամի դէմ, որ «Փրեմիըր լիկ»-ի 7-րդ դիրքը կը գրաւէ եւ վերջին մրցումներուն շատ լաւ ելոյթներ է ունենար:

Վերջին մրցումը իրար դէմ կը հանէ Փորթուգալի Պենֆիլեան եւ Ֆրանսայի Մարսելը:

Պենֆիլեա Փորթուգալի ախոյեանութեան 2-րդ դիրքը կը գրաւէ Սփորթինգ Լիգայնի ետին, մինչ Մարսել վերջին մրցումներուն լաւ վիճակի մէջ չի գտնուիր եւ այժմ կը գրաւէ Ֆրանսայի ախոյեանութեան դասաւորման 8-րդ դիրքը:

ՖԻՖԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ՝ 95-ՐԳ



Ֆուլթայլի ազգային խումբերու ՖԻՖԱ-ի ընդհանուր դասաւորման այս ամսը անցան 95-րդ դիրքը:

Ուրուկուէ, որ 11-րդ դիրքը կը գրաւէ, 4 դիրքով նահանջած է եւ այժմ կը գրաւէ 15-րդ դիրքը: 5 դիրք կորսնցուցին Սկովտիա եւ Թուրքիա, որոնք այժմ 39-րդ եւ 40-րդ դիրքերուն վրայ կը գտնուին: 5 դիրքով նահանջեց Նաեւ Լիբանանի ազգային խումբը, որ այժմ կը գրաւէ 120-րդ դիրքը:

Առաջին 10 դիրքերուն մէջ մասնաւոր փոփոխութիւն չարձանագրուեցաւ, եւ Անգլիա Պեմբրոքի հետ փոխանակուեցաւ 3-րդ եւ 4-րդ դիրքերը (Անգլիա նահանջեց), մինչ պարագան Նոյն Եր Փորթուգալի եւ Նետերլանտներուն միջեւ, որոնք յաջորդաբար 6-րդ եւ 7-րդ դիրքերը գրաւեցին:

Table with 2 columns: Rank and Points. Lists national teams and their corresponding points in the FIFA ranking.

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՒԺԵՐ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ. «ՓԱՍՔԱԼ ՍԼԷՅՄԱՆԻ...»

Շարունակուած Ա. Էջեւ

«Կոչ կ'ուղղենք հրապարակներուն վրայ գտնուող մեր բոլոր երիտասարդներուն եւ բարեկամներուն հեռանալու փողոցէն, յատկապէս նկատի ունենալով, որ այսօր Ֆիթիի տօնին առաջին օրն է», կը նշէ հարողորգութիւնը:

Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը ցաւակցութիւն յայտնեց Սլեյմանի ընտանիքին՝ խոստանալով, որ անոր արինը յումալտեալ պիտի չհոսի:

Կուսակցութեան հրապարակած հաղորդագրութեամբ ընդգծուեցաւ, որ Սլեյմանի սպանութեան հետաքննութիւնը պետք է թափանցիկ ըլլայ, յստակ եւ բժախտիչ:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան հաղորդագրութիւնը կը նշէ, որ մինչեւ հետաքննութեան արդիւնքներուն հրապարակումը, իրենք Սլեյմանի դէմ ոճիւրդ կը նկատեն քաղաքական ահաբեկում:

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի դատապարտեց Սլեյմանի դէմ գործուած քստմնելի ոճիւրդ եւ կոչ ուղղեց ինքնազսպումի, դիմելու իմաստուն քայլերու եւ զրպարտութիւններով եւ հակազդեցութիւններով չտարուելու:

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երէկ Պերքեի մէջ ընդունեց Յօր հանրապետութիւն համախմբումի երեսփոխաններ Չիատ Յաւաթն ու Մըլիմ Ռիաշին, ինչպէս նաեւ լիբանանեան բանակի հրամանատար գոր. ժողգէ Կունն ու Լեքքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գործակար Իմատ Օսմանը:

Ռայի պատրիարքը ցաւակցութիւն յայտնեց Փասքալ Սլեյմանի սպանութեան առիթով եւ կոչ ուղղեց հանդարտ մնալու եւ ինքնազսպումի, յատկապէս նկատի ունենալով քաղաքական եւ ապահովական առումով երկրին զգայուն եւ լարուած իրավիճակը:

Իր կարգին, Յաւաթն շեշտեց, որ Ռայի պատրիարքը եւ Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը կը փորձեն քրիստոնեայ փողոցը հանդարտ պահել՝ իրենց յոյսը դնելով

դատական իշխանութիւններուն վրայ, որ պէտք չըզգանք անարգ այս ոճիւրդ ծալքերը:

Իր կարգին, Յօր հանրապետութիւն համախմբումի երեսփոխան ժորժ Օքեյս յայտնեց, որ Փասքալ Սլեյմանի ոճիւրդ նկատած են քաղաքական՝ անեցնելով, որ իրենք կը զգուշացնեն բոլոր այն յայտարարութիւններէն, որոնք կը փորձեն այս հարցը ներկայացնել իբրեւ ջրիտոնեաներու եւ շիններու միջեւ պայքար:

Պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Մորիս Արիմ շեշտեց, որ Փասքալ Սլեյմանի թափած արիւնը յումալտեալ պիտի չհոսի եւ արդարութիւնը պիտի հաստատուի՝ ընթացող հետաքննութիւններուն լոյսին տակ:

Սլիմ խաթի դատապարտեց Սլեյմանի դէմ գործուած անարգ ոճիւրդ եւ կոչ ուղղեց բոլորին ինքնազսպումի ենթարկուելու:

Միւս կողմէ, Սլիմ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Շահաժիի հետ՝ հաստատելով, որ բանակի զաղտնի սպասարկութիւնը պիտի շարունակէ իր հետաքննութիւնը՝ բացայայտելու համար ոճիւրդի ճշմարտութիւնը:

Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարի պաշտօնակատար Պասսամ Մաուլուտի երէկ նախագահեց Ապահովութեան կեդրոնական խորհուրդի արտակարգ նիստին, որուն ընթացքին շեշտեց, որ Փասքալ Սլեյմանի սպանութիւնը գործած են սուրիացիներ՝ անեցնելով, որ այդ դէպքին առումով հետաքննութիւնը սկսած է առաջին իսկ վայրկեանէն, եւ ապահովական ու զինուորական բոլոր կառույցները կը համագործակցին իրարու հետ:

Մաուլուտի նշեց, որ Սլեյմանի դէմ գործողութիւնը կատարելու համար օգտագործուած ինքնաշարժ օրեր առաջ Ռայիի գողցումը է:

«Լիբանան իր դիմագրուած տագնապ-

ներէն անելի չի կրնար հանդուրժել, յատկապէս չի կրնար հանդուրժել սպորտըները: Յետեւաբար կոչ կ'ուղղենք իմաստուն ըլլալու եւ վստահելու ապահովական կառույցներուն, ինչպէս նաեւ դատական իշխանութիւններուն», ըսաւ ան՝ հաստատելով, որ իրենք հետաքննութիւնը պիտի շարունակեն մինչեւ ամբողջ ճշմարտութեան բացայայտումն ու յանցագործներուն դէմ արդար վճիռի արձակումը:

Մաուլուտի նշեց, որ լիբանանցիները պետք է համբերատար ըլլան՝ նկատել տալով, որ Սլեյմանի սպանութեան ոճիւրդը շուրջ հետաքննութիւնը կը կատարուի թափանցիկութեամբ եւ արհեստավարժ կերպով:

Ան կոչ ուղղեց լիբանանցիներուն պահպանելու երկրին ապահովութիւնը:

«Լիբանանի մէջ սուրիացիներու ներկայութիւնը մերժելի է եւ անհանդուրժելի, եւ կը տեսնենք, որ կան մեծ թիւով ոճիւրդներ, որոնք կը գործուին սուրիացիներուն կողմէ, իսկ լիբանանեան բանտներուն մէջ սուրիացի ձերբակալեալներուն համեմատութիւնը հասած է 35 առ հարիւր», շեշտեց ան:

Արդարութեան նախարարի պաշտօնակատար Յանի Խուրի հաստատեց, որ Փասքալ Սլեյմանի առեւանգումն ու անոր դէմ գործուած քստմնելի ոճիւրդ ոչ միայն ժպիլելու ու ձեռնարկելու ցնցեց, այլ՝ ամբողջ Լիբանանը:

Ան շեշտեց, որ ինք անձամբ ընդհանուր դատախազութեան հետ կը հետեւի հետաքննութեան մանրամասնութիւններուն՝ ձերբակալելու եւ պատժելու համար այս ոճիւրդի մեղապարտ բոլոր յանցագործները:

Գաղթականներու հարցերու նախարարի պաշտօնակատար Իսամ Շարաֆէտտին յայտնեց, որ Լիբանանի մէջ ապահովութիւն չկայ՝ անեցնելով, որ սուրիացի տեղահանուածներուն յատուկ գաղթականացումներուն մէջ կան 20 հազար զինեալներ, որոնք զերծ ժամուն «կը կանչուին»:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԱՐԶԻԿ

44-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 432

- Խմբագրական «Խորին յարգանք»
• Յաղորդագրութիւն 4
• Երեք սերունդ հայեցի ապրումով, ՅՄԸՄ-ական խանդավառութեամբ- Յակոբ Խաչերեան

- Որպէսզի Արցախի ՅՄԸՄ-ական մեր քոյրերն ու եղբայրները կարենան դարձեալ տողանցել Ստեփանակերտի մէջ- Տիրան Վահրատեան
• Յամախմբուիլ եւ պատրաստել նորանոր հօգ անուրիներ- Լիւնի Սարմազեան
• ՅՄԸՄ-ի ատենապետներու առցանց ժողով
• Նուրի ՅՄԸՄ-ի թանգարանին
• Կեդրոնական վարչութեան հանդիպումները Նետերլանտներու մէջ
• Արժէքաւոր գործի մը նոյնքան արժէքաւոր թարգմանութիւնը
• Ներածական- Արաքսիա Ահարոնեան
• Երկու խօսք- ՅՄԸՄ-ի Կեդրոնական վարչութիւն
• Մեր հռչակաւոր խարոկահանդէսները- Յարութ Զեքիճեան
• Վկայութիւններ ՅՄԸՄ-ի ֆուլթայլի փառաւոր անցեալէն (Ե.)- Ծորճիկ Ռաստկէլէնեան
• Ծառայատէր ՅՄԸՄ-ական եղբ. Յամբիկ Միսաքեանի յիշատակին- ՅՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութիւն

Թիւը կ'ընդգրկէ նաեւ ՅՄԸՄ-ական կեանքի անդրադարձներ (Յարաւային Ամերիկա, Աւստրալիա, Զանաւա, Արեւմտեան Մ. Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Յայաստան, Փարիզ, Միւնիխ, Նետերլանտներ, Յունաստան, Լիբանան եւ Սուրիա): 56 էջ: Սակ՝ 25000 լ.ո.: Ստանալու համար դիմել Յամագրային գրախանութ:

«ՆԱԽԱԳԱՀԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ...»

Շարունակում Ա. Էջեն

Յ. Բագրատունի շեշտեց, որ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի երկխոսության և բանակցություններու կողք կարելի չէրա որեւէ ձեռով իրականության վերածել՝ լիբանանեան քաղաքական որոշ ուժերու մերժումին պատճառով:

Ան ընդգծեց ազգային միասնականության կառուցած մնալու կարեւորությունը՝ նկատի ունենալով, որ ազգային միասնականությունը լիբանանեան սահմանադրության հիմնասյուններն է:

Անդրադառնալով հանրապետության նախագահի յատկանիշներուն՝ Յ. Բագրատունի յայտնեց, որ անկիւ կը նշանակէ դպչիլ Թաեֆի համաձայնագիրին բովանդակած կետերուն, «համաձայնագիր մը, որ 1989-ին կրցաւ զինադուլ հաստատել լիբանանեան տարբեր ուժերուն միջեւ եւ կասեցնել 15 տարեան պատերազմ մը», ըսաւ ան:

Երեսփոխան Բագրատունի կոչ ուղղեց լիբանանեան ղեկավարություններուն միջեւ խորհրդակցություն կատարելու եւ տալու միացեալ որոշում մը՝ ուղղուելու խորհրդարան եւ ընտրելու հանրապետության նախագահը: «Հանրապետության նախագահին զօրութիւնը կը ճշդօրէն բարեկարգումի քաղաքականութիւններուն նկատմամբ իր յանձնառութեամբ եւ այլ իշխանութիւններուն, ինչպէս՝ օրէնսդրական եւ դատական, հետ անոր գործակցութեան եղանակով», ըսաւ ան:

Յ. Բագրատունի նշեց, որ շիի երկեակին նախագահական թեկնածուն՝ Սլեյման Ֆրեյժիէ ունի հանրապետության նախագահ ընտրուելու յատկանիշները: «Ֆրեյժիէ բարեկամ է, եղբայր եւ ազգային ղեկավար մը, որ Լիբանանի բոլոր քրիստոնեաները կը ներկայացնէ», հաստատեց ան՝ աւելցնելով, որ երբ ընտրութեան ճիշդ պահը հնչէ, պլոքն ու ՅՅԴ-ն համապատասխան կեցուածք կը յայտարարեն:

Յ. Բագրատունի նշեց, որ ՅՅ Դաշակցութիւնը Լիբանանի ամենէն հին կուսակցութիւններէն է՝ ընդգծելով, որ ՅՅԴ-ն իր դաշակցիներուն չի դաւաճաներ, եւ անոր կեցուածքները ազգային են: «ՅՅ Դաշակցութիւնը կը խուսափի մագլցումներէ եւ տագնապներէ, որովհետեւ անոր անդամները լաւ գիտեն հայրենիք կորսնցնելու իմաստը», նշեց ան:

Երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ Իսրայէլի կողմէ Դամասկոսի մէջ իրանեան հիւպատոսութիւնը ճնշակած ընդհանուր յայտարարելու համազօր է, որովհետեւ Իսրայէլեան բանակը իր այդ բռնարարով ոտնձգութիւն գործած է Սուրիոյ եւ Իրանի գերիշխանութիւններուն դէմ: «Իսկ Իսրայէլ 7 հոկտեմբեր 2023-էն ի վեր կը փափաքի շրջանը ներքաշել ընդարձակ պատերազմի մը մէջ՝ փախուստ տալու համար Կազայի մէջ գործած իր ոճիրներէն», աւելցուց ան:

Յ. Բագրատունի յայտնեց, որ Սուրիոյ մէջ Իրանի հիւպատոսարանը ճնշակած գործողութիւնը կարելի չէր կատարել, ամաց Արաբացի Նահանգներու տեղեկութեան, որովհետեւ ամերիկեան զաղտնի սպասարկութիւնները նախապէս տեղեկաւ կ'ըլլան շրջանին մէջ Իսրայէլի կատարելիք բոլոր գործողութիւններէն:

«Իրան փոքր երկիր մը կամ զինեալ փաղանգ մը չէ, այլ՝ մեծ պետութիւն մը, որ աշխարհի մէջ ունի իր կշիռն ու զինուորական ուժը, ինչպէս նաեւ հիմնական դերակատարութիւն ունի միջազգային յարաբերություններուն մէջ: Իրանի պատասխանը պիտի արձանագրուի ճիշդ պայմաններուն մէջ եւ յարմար ձեւով», յայտնեց ան:

Յ. Բագրատունի յոյս յայտնեց, որ Իրանի պատասխանը ըլլայ փոքր, որովհետեւ աշխարհը այսօր կ'ապրի զսպումի միջոցով: «Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, Միացեալ Նահանգներ տիրեցին աշխարհին եւ փոքր ժողովուրդներուն բարոյական արժեքները հարուածեցին, ինչպէս նաեւ մեծ թիւով երկիրներու գերիշխանութիւններուն դէմ ոտնձգություններ գործեցին, զինուելով՝ մարդկային իրաւունքներուն եւ ազգային ինքնորոշման իրաւունքի կարգախօսներով: Ուաշինկթընի մերժումը Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի բազմաբեռնութեան կոչին հեղձուցիչ տագնապ մըն է, որ իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ բոլոր երկիրներու ժողովուրդներուն վրայ», յայտնեց Յ. Բագրատունի:

Երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ Իսրայէլի դէմ շարք մը կոր քայլեր որդեգրելով, ըսաւ Ֆիտան՝ նշելով, որ «Կազայի սովահար բնակիչներուն» օգնութիւնը մերժելու «որեւէ պատրուակ» գոյութիւն չունի:

Թրքական դիւանագիտութեան պետը յայտնեց, որ Կազայի համար ծովու եւ օդի ճամբով Եգիպտոս ուղարկած օժանդակութիւնները անցած են 42 հազար թուրք, եւ Թուրքիան Կազա օժանդակութիւններ ամենէն շատ ամառած երկու երկիրներէն մէկն է:

Թուրքիա երկու Իսրայէլի դէմ 54 ապրանքներու, ներառեալ օդանաւերու վառելիքի, շինարարական երկաթի, ողորկ պողպատի, մարմարի եւ սերամիքի արտածումները սահմանափակող որոշում մը որդեգրեց:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Եիսրայէլ Զաց յայտնեց, որ Թուրքիան դէպի Իսրայէլ իր արտածումները սահմանափակելու որոշումով «միակողմանի կերպով ոտնահարեց» երկու երկիրներուն միջեւ առեւտրական համաձայնությունները՝ աւելցնելով, որ Իսրայէլ պիտի հակադարձէ սահմանափակումներ հաստատելով Թուրքիայէն եկող ապրանքներուն վրայ:

Զաց աւելցուց, որ Թուրքիոյ նախագահ Ռեժեփ Թայիփ Էրտողան «անգամ մը եւս թուրք ժողովուրդի տնտեսական շահերը կը գոհե Յամասիսի աջակցելու համար, եւ Լոյնսման քայլով պիտի հակադարձենք»:

րատունի յայտնեց, որ ամերիկեան վարչակազմը կը փորձէ Եւրոպայի եւ Ասիոյ ցամաքամասերուն եւ Ծոցի երկիրներուն միջեւ տագնապներ ստեղծել եւ երկիրները պարպել իրենց իրաւունքներէն, որպէսզի պահպանէ տուրքի արժեքը, իր տնտեսութիւնը, նաեւ ու կազմ:

«Միացեալ Նահանգներ կը շահագործեն Եւրոպայի եւ տնտեսապէս կը քանդեն զայն՝ Ուքրանիոյ մէջ իրենց բռնկեցուցած պատերազմով: Իսկ Ռուսիա կրցաւ շարունակել զինուորական իր գործողությունները եւ յաղթանակներ արձանագրեց, հակառակ դժուարութեանց եւ տագնապներուն», ընդգծեց ան:

Կազայի դէմ պատերազմին մասին հարցումի մը պատասխանելով՝ Յ. Բագրատունի զգուշացուց աշխարհը մարդասիրական զինադուլով, պատանդներու փոխանակումով եւ դիւանագիտական ջանքերով զբաղեցնելու քայլերէն:

Ան յայտնեց, որ Իսրայէլ կ'ահաբեկէ պաղեստինցի պատանդները՝ զանոնք ազատ արձակելէ ետք, հետեւաբար Դիմադրութեան բացի, պաղեստինցի ժողովուրդին դիմաց ոչ մէկ լուծում կայ:

«Արաբական եւ եւրոպական երկիրները ձեռնածալ կը մնան եւ կը մերժեն ճանչնալ, թէ Կազայի մէջ պատահածը հաւաքական ցեղասպանութիւն է եւ ցեղային զտում: Այնպէս ինչպէս չըմբռնեցին կամ չուզեցին ըմբռնել Արցախի դէմ պատահածը: Իսկ երկու պետութիւններ հիմնելու լուծումին մասին բոլոր խօսքերը սուտ են, որովհետեւ Իսրայէլ կը մերժէ այդ իմաստով բանակցությունները եւ կը շարունակէ բռնագաղթի եւ քարկոծելու պաղեստինցի ժողովուրդը՝ տիրանալով անոր հողերուն», եզրափակեց Յ. Բագրատունի:

ԹՈՒՐԲԻԱ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՄ ...

Շարունակում Ա. Էջեն

«Որոշեցինք Իսրայէլի դէմ շարք մը կոր քայլեր որդեգրել», ըսաւ Ֆիտան՝ նշելով, որ «Կազայի սովահար բնակիչներուն» օգնութիւնը մերժելու «որեւէ պատրուակ» գոյութիւն չունի:

Թրքական դիւանագիտութեան պետը յայտնեց, որ Կազայի համար ծովու եւ օդի ճամբով Եգիպտոս ուղարկած օժանդակութիւնները անցած են 42 հազար թուրք, եւ Թուրքիան Կազա օժանդակութիւններ ամենէն շատ ամառած երկու երկիրներէն մէկն է:

Թուրքիա երկու Իսրայէլի դէմ 54 ապրանքներու, ներառեալ օդանաւերու վառելիքի, շինարարական երկաթի, ողորկ պողպատի, մարմարի եւ սերամիքի արտածումները սահմանափակող որոշում մը որդեգրեց:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Եիսրայէլ Զաց յայտնեց, որ Թուրքիան դէպի Իսրայէլ իր արտածումները սահմանափակելու որոշումով «միակողմանի կերպով ոտնահարեց» երկու երկիրներուն միջեւ առեւտրական համաձայնությունները՝ աւելցնելով, որ Իսրայէլ պիտի հակադարձէ սահմանափակումներ հաստատելով Թուրքիայէն եկող ապրանքներուն վրայ:

Զաց աւելցուց, որ Թուրքիոյ նախագահ Ռեժեփ Թայիփ Էրտողան «անգամ մը եւս թուրք ժողովուրդի տնտեսական շահերը կը գոհե Յամասիսի աջակցելու համար, եւ Լոյնսման քայլով պիտի հակադարձենք»:

Advertisement for Vernissage exhibition. Title: ՄԵՐ ՇՈՒԿԱՆ. Location: «Մասթըր Սոլ» Գոլորճ Համուտ. Date: Կիրակի, 14 ԱՊՐԻԼ 2024-ին, առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00. Exhibitions: ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԿԱՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳՐՈՎ ԻՐԵՆՑ ՄԱՆՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԵՐԵՆ. - «Փոքրերու Աշխարհ» եւ «Ուրախ Յրեշտակ» մանկապատանեկան խումբերը - Թեքեան վարժարանի պարախումբը - «Հայկական Թրիօ» խումբը - Երգչուհիներ՝ Կարինէ Անդրանիկեան, Լարիսա Երգիչներ՝ Բաֆֆի Կեօվոյանեան եւ Անրոնի Օպէյտ:

Advertisement for 'Հրեշտ' exhibition. Title: ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՍԸ ԶԱՀ-Ի ԱՐՑԱՆԻ Վ. ՓԱՓԱՉԵԱՆԻ ԱՆՈՒՍ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՒ Ռ. ԿԱԼԻՆՍԿԻ. Exhibition: Հրեշտ լուսանկարայ. Location: Տեղի կ'ունենայ հինգաբայրի 18, եւ ուրբաթ 19 ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Յ. Տր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Showtimes: Տոմսերը ստանալ Յամազգայինի գրախանութիւն՝ «Շաղգոյեան» կեդրոն, ԱՅԴԻԼ-ի BOB գրասենեակէն՝ «Արին» կեդրոն, եւ երկայնաքանակ օրը՝ սրահի կիջէն:

Advertisement for 'ՈՒ ՄՈՒՆԵՔ ... ՄԵՆԵՔ ԵՆԵՔ' exhibition. Title: ՈՒ ՄՈՒՆԵՔ ... ՄԵՆԵՔ ԵՆԵՔ. Location: Տեղի կ'ունենայ հինգաբայրի 24 ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 8-ին, «Եմիլ Լաիուտ» հանդիսարանին մէջ:

Advertisement for 'ԿՈՒԶՈՒԻ' exhibition. Title: ԿՈՒԶՈՒԻ. Location: Տեղի կ'ունենայ ուրբաթ 26, եւ շաբաթ 27 ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Յակոբ Տր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Showtimes: Տոմսերը ստանալ Յամազգայինի գրախանութիւն՝ «Շաղգոյեան» կեդրոն, ԱՅԴԻԼ-ի BOB գրասենեակէն՝ «Արին» կեդրոն, եւ ելոյթի օրը՝ սրահի կիջէն:

Advertisement for 'ԱՐՑԱՆԻ ԶԱՅՆԵՐ' exhibition. Title: ԱՐՑԱՆԻ ԶԱՅՆԵՐ VOICES OF ARTSAKH. Location: Տեղի կ'ունենայ ուրբաթ 26, եւ շաբաթ 27 ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Յակոբ Տր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Showtimes: Տոմսերը ստանալ Յամազգայինի գրախանութիւն՝ «Շաղգոյեան» կեդրոն, ԱՅԴԻԼ-ի BOB գրասենեակէն՝ «Արին» կեդրոն, եւ ելոյթի օրը՝ սրահի կիջէն: